



Գիտե՞ք, թե եզ արծիւը ինչպէս կ'ընտրէ իր ձագերուն արծանի հայր ըլլալու արու արծիւը:

Եզ արծիւը շատ հետաքրքրական ձեւով կ'ընտրէ իր ձագերուն հայրը: Ան ծառէն կամ թուփէն ճիւղ մը կը կտրէ եւ կտուցին մէջ բռնած կը թռչի, իր շուրջը հաւաքելով արու արծիւները: Բոլորին ուշադրութիւնը գրաւելէ ետք, այդ ճիւղը կտուցէ վար կը ձգէ եւ ուշի ուշով կը հետեւի, թէ ո՞վ պիտի կրնայ այդ ճիւղը գետնին հասնելէն առաջ բռնել:

Այդ արագաշարժ արծիւը ճիւղը կը բերէ ու կտուցէ-կտուց կը յանձնէ եզ արծիւին, սակայն ան այսքանով չի բաւարարուիր, կրկին կը նետէ ճիւղը ու կը սպասէ: Այսպէս քանի մը անգամ նետելէ ետք, վերջապէս կը համոզուի, որ այս արուն արծանի է իր ձագերուն հայրը ըլլալու:

Արու եւ եզ արծիւները միասնաբար թռչելով, յարմար վայր մը կ'ընտրեն իրենց բոյնը շինելու: Բոյնին արտաքին մասը ճիւղերով կը կազմեն, իսկ ներքինը՝ իրենց փետուրներով, որպէսզի ճուտիկները տաքուկ ու փափուկ բոյն մը ունենան:

Երբ բոյնը պատրաստ կ'ըլլայ Եզ արծիւը հաւկիթներ կ'ածէ ու երկուքով կը սպասեն, որ ձագերը լոյս աշխարհ գան: Երբ ձագերը հաւկիթը ճեղքելով դուրս կ'ելլեն, շատ փոքր, մերկ ու տկար կ'ըլլան: Ծնողները իրենց մարմինով կը ծածկեն զանոնք մինչեւ որ զօրանան: Երբ ձագերը ամբողջովին փետրապատ ըլլան, հայր արծիւը կը նստի բոյնին ծայրը ու իր թւերով կը սկսի ցնցել բոյնը:

ԻՆՉՈ՞Ւ ԱՐԾԻՒԸ ԱՅՂՊԵՍ Կ'ԸՆԵ
 Ան այդպէս կ'ընէ, որպէսզի բոյնին մէջի փետուրները դուրս հանէ ու միայն կոշտ ճիւղերով բոյնին հիմքը մնայ: Իսկ ձագերը բոյնին մէջ նստած չեն հասկնար, թէ հայրիկն ու մայրիկը ինչո՞ւ այդպէս

ԱՐԾԻՒՆ ՈՒ ԻՐ ՁԱԳԵՐԸ



կը վարուին, չէ՛ որ անոնք շատ հոգատար ու քնքուշ էին իրենց նկատմամբ:
 Մայր արծիւը ծուկ մը կ'որսայ եւ քիչ մը հեռու ծառի մը վրայ կը թռչի, սակայն ձագերուն աչքերէն չի կորսուիր, կ'ընտրէ այնպիսի տեղ մը որ ձագերը կարենան զինք տեսնել ու կը սկսի կամաց-կամաց ուտել որսացած ծուկը: Ձագերը բոյնին մէջ նստած կը ճչան ու կը ծղրտան, չեն հասկնար, թէ ի՞նչ պատահած է: Առաջ հայրիկն ու մայրիկը զիրենք կը կերակրեն ու կը խմցնեն, իսկ հիմա ամեն ինչ փոխուած է՝ բոյնին մէջ փետուր չկայ, իրենք անթի ու ծարաւ են:

ՁԱԳԵՐԸ Ի՞ՆՉ ՊԵՏԵ Է ԸՆԵՆ
 Անօթի են, կ'ուզեն ուտել: Ձեւով մը պէտք է դուրս գան բոյնէն եւ այդ ատեն թռչնակները կը սկսին շարժումներ ընել, շարժումներ՝ որոնք նախապէս չէին ըրած երբեք:
 Ահա անոնցմէ մէկը անփութօրէն ինքզինքը բոյնէն վար կը նետէ ու անդունդ կիցնայ, բայց գետին չհասած հայր արծիւը կը հասնի ու մէջքին վրայ առնելով կը փրկէ զինք: Այսպէս քանի մը անգամ կը կրկնուի այս գործողութիւնը՝ ձագը կը փորձէ թռչիլ, բայց չի յաջողիր, հայրը կը հասնի օգնութեան:
 Այս ձեւով ձագերը կը սորվին թռչիլ ու իրենց սնունդը առանց ծնողներու օգնութեան ապահովել:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒԹԱ ԿԱՌԵԱՆ-ՏԻՐՈՒԲԵԱՆ
 ՆԿԱՐԱԶԱՐՈՒՄԵՑ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇՈՒՄԵԱՆ

ՓՈՔՐԻԿ ԱՍՏՂ

10 ՏԱՐՈՐԻՆԱԿ ԿԵՆՂԱՆԻՆԵՐ ԵՒ ԲՈՅՍԵՐ

Աշխարհի վրայ ամեն բան իր գոյնն ու չափը ունի, բայց կան նաեւ բացառություններ:

Փոքրիկ աստղ մը կար, որ կ'ապրեր տիեզերքին մէջ, միւս աստղերուն եւ մոլորակներուն հետ: Աստղերուն մեծամասնութիւնը շատ փայլուն էին, սակայն պզտիկ աստղը որքան որ փոքր էր չէր կրնար անոնց նման փայլիլ:


Գիշեր մը, երբ բոլոր աստղերը կը պարէին լուսնին շուրջ, պզտիկ աստղը տխուր էր եւ կու լար: Յանկարծ լսեց ձայն մը որ զինք կը կանչէր եւ կը թելադրէր, որ երթայ արեւուն քով հարցը լուծելու համար: Պզտիկ աստղը ուրախացաւ, եւ շուտով գնաց արեւուն քով:

Արեւը ժպտով ընդունեց պզտիկ աստղը եւ հարցուց, թէ ի՞նչ կը փափաքէր: Պզտիկ աստղը ըսաւ. «Երանի քեզի պէս մեծ եւ փայլուն ըլլայի»: Արեւը պատասխանեց՝ «Բաւական ժամանակ կ'ուզես որ ինծի չափ մեծ ըլլաս, բայց դուն շուտով աւելի փայլուն պիտի ըլլաս»:

Այդ վայրկեանին տարօրինակ բան մը պատահեցաւ, փոքրիկ աստղը փոփոխութիւն մը զգաց իր մէջ եւ սկսաւ աւելի փայլիլ:

Փոքրիկ աստղը շատ ուրախացաւ եւ շնորհակալութիւն յայտնեց արեւուն զինք աւելի փայլուն դարձնելուն համար, իսկ արեւը պատասխանեց, «դուն միշտ փայլուն էիր, միայն պետք է ներքնապէս զգայիր փայլուն ըլլալդ»:

Այսպիսով փոքրիկ աստղը վերադարձաւ միւս աստղերուն քով, եւ այդ օրուրնէ սկսեալ միշտ հպարտ զգաց իր փայլքով ու հմայքով:



Թափանցիկ տերեւ մը



Մօրուքաւոր կատու



Տարօրինակ բզեզ մը



Սեւ խնձոր



Կապոյտ մեղու




Լսնամորթ եղջերուն



Ճաղատ ու վարդագոյն երանգով ձի



Երկերեսանի խեցգետին



ԳԻՏԱԿԱՆ ԻՆՉ ԳԻՏԵՆԷՔ ՈՒՂԵՂԻՆ ՄԱՍԻՆ



ՈՒՂԵՂԸ ԿԱԶՄՈՒԱԾ Է 60 ԱՌ ԶԱՐԻՒՐ ԻՒՂԷ

Ան մեր մարմնին ամենէն իւղոտ գործարանն է: Ամէն օր մեր ուղեղին մէջէն կանցնին 50.000-70.000 միտքեր:

Մեր ուղեղին մէջ տեղեկութիւնները կը շրջին ժամական 431 քմ արագութեամբ, շոգեկառքէ մը աւելի արագ:

Իւրաքանչիւր տեղեկութիւն մէկ բջիջէն միւս բջիջը կը ցատկէ շիղի բարակ թելերու ընդմէջէն: Այս շիղերը ծածկուած են գիրենք պահպանող խաւով մը, որ բաղկացած է յատկապէս իւղէ: Այս իւղը կը մեկուսացնէ թելերը եւ կարելիութիւնը կու տայ տեղեկութիւններուն աւելի արագ շրջելու:

Երբ մենք նոր բան մը կը սորվինք, այս թելերը ուղեղի բջիջ մը կը կցեն՝ ուրիշ բջիջներու մասը ճիւղեր գործածելով: Մենք մեր ուղեղին մէջ ունինք անշրայետիւն մէջ գոյութիւն ունեցող աստղաձիւղէրէն շատ աւելի մեծ թիւով կապեր:

ՄՈՌԱՅՈՒՄ

Շատերուն պատահած է յանկարծակիօրէն մոռացումի վայրկեան մը ապրիլ: Ասիկա բնական է: Մեր ուղեղը կազմուած է յատուկ ձեւով մը եւ ան երբեմն կարգ մը տեղեկութիւններ դուրս կը ձգէ շատ չժանրաբեռնուելու համար: Երեւակայեցէք, որ ուղեղը դարակ մըն է, եթէ մենք այդ դարակին մէջ շատ բաներ դնենք, ան չի գոցուիր եւ հետեւաբար լաւ չի բանիր: Յաճախ մեր ուղեղը կը ջնջէ այն յիշտակները, որոնք լաւ չեն արձանագրուած: Օրինակի համար եթէ դուս դասերդ լաւ վերաքաղ չընես, գայն դժուար միտքդ պիտի պահես: Այդ տեղեկութիւնները լաւ արձանագրելու համար, պէտք է լաւ քնացած եւ առողջ բաներ կերած ըլլաս:

ՔՈՒՆԸ ԵՒ ԵՐԱԶԸ

Երբ մենք քնացող անձ մը տեսնենք, այն տպաւորութիւնը կ'ունենանք, թէ ան բան մը չ'ըներ: Սակայն, մարմնին մէջ, անոր գործարանները կ'աշխատին, ուղեղն ալ չի դադրիր բանելէ: Երբ մենք կը քնանանք, մենք կանցնինք քունի փուլը եւ ապա խորունկ եւ դանդաղ քունը:

Այս ժամանակամիջոցին է, որ մենք ամենէն շատը կը հանգստանանք, մեր մարմինը կը վերանորոգէ ուժի իր պահեստները: Անկէ ետք կու գայ փարատոքսալ քունը: Ընդհանրապէս այս փուլին է, որ մենք կ'երագենք: Երբ դիտենք քնացող անձի մը, կրնանք նշմարել, թէ ան քունի այդ փուլին մէջ է, որովհետեւ անոր կոպերուն տակ աչքերը կը շարժին, ինչպէս երբ արթուն է եւ բան մը կը դիտէ: